ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ **2022 թ. նոյեմբերի 24**-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

ՀՀ, ք. Երևան 24.11.2022 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2022 թ. նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 1 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 88 անդամներից 76-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ ԵՊՀ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Հ. Վարդևանյան):
2. Դեկանների պաշտոնների ընտրության վերաբերյալ ԵՊՀ արևելագիտության և ռադիոֆիզիկայի ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան):
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «ԵՊՀ ՍԹԵՄ դպրոց» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու որոշման նախագծի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան):
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Հրատարակչություն» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրության ու գրահրատարակչական քաղաքականության հաստատում (զեկ.՝ ԵՊՀ իրավաբանական ծառայության պետ Ա. Ա. Թադևոսյան):
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կանոնադրության հաստատում (զեկ.՝ ԵՊՀ իրավաբանական ծառայության պետ Ա. Ա. Թադևոսյան):
6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրության հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Հ. Բարխուդարյան):

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտակազմակերպչական խորհրդի կանոնակարգի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Հ. Բարխուդարյան):
8. ԵՊՀ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի կազմի փոփոխություն (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան):
9. Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ» բակալավրի նոր կրթական ծրագրի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի նախագահ Է. Ս. Գևորգյան):
10. Տեղեկատվություն 2022-2023 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին (զեկ.՝ ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տ. Ս. Գալստյան):
11. Հաղորդում 2022-2023 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
12. Հաղորդում 2022-2023 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին (զեկ.՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
13. Հաղորդում ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2021-2022 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին (զեկ.՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
14. Հաղորդում ԵՊՀ ՈՒԳԸ 2021-2022 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ Մ. Ս. Փանոսյան):

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

15. Երևանի պետական համալսարանի 2022/2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի (այլ ֆինանսավորմամբ) անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի ընդունած որոշման հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտքարտուղար Մ. Հովհաննիսյան):
16. ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆ. Սեդա Գասպարյանի, դոցենտ Ալինա Պետրոսյանի «DOMAIN-SPECIFIC ENGLISH Insight into Health-Care Setting» աշխատությունը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես ուսումնամեթոդական ձեռնարկ հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտքարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):
17. ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի դասախոսներ Գայանե Մելտոնյանի, Քրիստինե Սողոմոնյանի, Նաիրա Դիվանյանի «Գերմաներեն A2-B1 մակարդակների համար» աշխատությունը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտքարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):

18. «Կլինիկական կրթությունը՝ որպես ակադեմիական կրթության և պրակտիկայի զուգակցման արդյունավետ եղանակ» (15 ր.), (զեկ.՝ ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրեն, ի.գ.թ., դոցենտ Ք. Հ. Վարդանյան):
19. «Օրգանական թափոնների նախամշակում, մանրէային կենսազանգվածի, կենսաէներգիայի և արժեքավոր այլ նյութերի ստացում» (15 ր.), (զեկ.՝ ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյան):

Նախքան նիստի օրակարգի հաստատումը ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ այս տարի տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում կրթական մրցանակների են արժանացել ԵՊՀ 7 ուսանողներ: Շնորհավորելով մրցանակիրներին՝ ԵՊՀ ռեկտորը նվերներ հանձնեց և շնորհակալություն հայտնեց նրանց՝ ԵՊՀ պատիվը բարձր պահելու համար: Այնուհետև ԵՊՀ-ում հիսուն տարվա բարեխիղճ ու անբասիր գործունեության, ինչպես նաև համալսարանի ու գործի նկատմամբ ունեցած մեծ նվիրումի համար ԵՊՀ ոսկե մեդալով պարգևատրեց գիտքարտուղարության առաջատար մասնագետ Մարինա Մուրադյանին:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին՝ առաջարկելով հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը:

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում: ԵՊՀ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ Պողոս Վարդևանյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում շնորհելու 14 հայտերը՝ փաստելով, որ ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են պահանջվող չափորոշիչներին և երաշխավորված են հանձնաժողովի կողմից: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկով ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Սահակյան Արթուր (նախագահ),
2. Ավանեսյան Հրանտ,
3. Գրիգորյան Կարեն,
4. Սահակյան Մյասնիկ,
5. Սահակյան Սվետա:

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 76 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ
1.	Հովհաննիսյան Մերի Վազգենի	Մանկավարժության և կրթության զար-գացման կենտրոնի ասիստենտ	76	0	0
2.	Մաթևոսյան Էլյանորա Նորայրի	Նորարարության տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ	75	1	0
3.	Մնացականյան Գրիգոր Մանվելի	Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ	74	2	0
4.	Սիմոնյան Գայանե Սիմոնի	Աստվածաբանության ամբիոնի ասիտենտ	75	1	0
5.	Մարտիրոսյան Վերգինե Սամվելի	Աստվածաբանության ամբիոնի ասիտենտ	75	1	0
6.	Շահինյան Մարիամ Աշոտի	Կենսաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ	76	0	0
7.	Սարոյան Սաթենիկ Նորիկի	Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ	76	0	0
8.	Թամրազյան Շուշանիկ Հրաչյայի	Ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ	75	1	0
9.	Խանոյան Նելլի Սարգսի	Գերմանական բանասիրության ամբիոնի ասիստենտ	74	2	0
10.	Շաչիլվյան Նաիրա Արամայիսի	Գերմանական բանասիրության ամբիոնի ասիստենտ	75	1	0
11.	Գևորգյան Գառնիկ Թելմանի	Իրանագիտության ամբիոնի ասիստենտ	76	0	0
12.	Ավչյան Հակոբ Վարդանի	Իրանագիտության ամբիոնի ասիստենտ	76	0	0
13.	Մովսիսյան Լիլիթ Ռազմիկի	Թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ	76	0	0
14.	Աղաջանյան Ամալյա Նշանի	Թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ	75	1	0

Որոշվեց.

դիմել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2. Դեկանների պաշտոնների ընտրության վերաբերյալ ԵՊՀ արևելագիտության և ռադիոֆիզիկայի ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում:

Հաջորդիվ Հ. Հովհաննիսյանը ԵՊՀ գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց դեկանների պաշտոնների ընտրության վերաբերյալ Արևելագիտության և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումները, ըստ որոնց՝ ֆակուլտետներում դեկանների պաշտոններում վերընտրվել են նախկին դեկաններ Ռուբեն Մելքոնյանն ու Խաչատուր Ներկարարյանը: Ներկայացված որոշումները հաստատելու համար կազմվեց հաշվիչ հանձնաժողով, ապա հայտարարվեց փակ գաղտնի քվեարկություն: Օրակարգային հարցերի սպառումից հետո հաշվիչ հանձնաժողովը հայտարարեց քվեարկության արդյունքները.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ
1.	Մելքոնյան Ռուբեն	ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան	66	2
2.	Ներկարարյան Խաչատուր	ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան	68	0

Որոշվեց.

հաստատել ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված դեկանների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «ՍԹԵՄ դպրոց» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն անելու որոշման հաստատում:

Անցնելով օրակարգային հաջորդ հարցին՝ ԵՊՀ ռեկտորը ներկայացրեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «ԵՊՀ ՍԹԵՄ դպրոց» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու որոշման նախագիծը:

Հ. Հովհաննիսյանի խոսքով դպրոցն իրականացնելու է միջնակարգ հանրակրթական ծրագրի երրորդ աստիճանի կրթություն: Նա փաստեց, որ արդեն իսկ բազմաթիվ աշխատանքներ են տարվել այս ուղղությամբ: ԵՊՀ ԳԽ-ն հավանություն տվեց ներկայացված նախագիծը ՀԽ հաստատմանը ներկայացնելու որոշմանը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն անել՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում «ՍԹԵՄ դպրոց» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Հրատարակչություն» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրության ու գրահրատարակչական քաղաքականության հաստատում:

Օրակարգային հաջորդ հարցի շրջանակում ԵՊՀ իրավաբանական ծառայության պետ Արմեն Թադևոսյանը ներկայացրեց ԵՊՀ հրատարակչության կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությունն ու գրահրատարակչական քաղաքականությունը: Քննարկումների ժամանակ հնչեցին տարբեր դիտարկումներ ու պարզաբանումներ: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Հրատարակչություն» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությունն ու գրահրատարակչական քաղաքականությունը:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կանոնադրության հաստատում:

ԵՊՀ գիտական խորհրդի նիստում Ա. Թադևոսյանը ներկայացրեց Երևանի պետական համալսարանի ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կանոնադրությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կանոնադրությունը:

6.«Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի կանոնադրության» հաստատում:

Հաջորդիվ ներկայացվեց Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի կանոնադրությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի կանոնադրությունը»:

7. «Երևանի պետական համալսարանի գիտահրատարակչական խորհրդի կանոնակարգի» հաստատում:

Օրակարգային հաջորդ հարցին անդրադարձավ ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը՝ ներկայացնելով Գիտակազմակերպչական խորհուրդի գործունեության շրջանակը: Նշված խորհուրդը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որի գործունեությունն ուղղված է ԵՊՀ-ում տարվող գիտական ու գիտակազմակերպչական աշխատանքների պատշաճ իրականացմանը (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել «Երևանի պետական համալսարանի գիտահրատարակչական խորհրդի կանոնակարգը»:

8. Գիտխորհրդին կից մրցութային հանձնաժողովի կազմի փոփոխություն:

Օրակարգային հաջորդ հարցին անդրադառնալով՝ Հ. Հովհաննիսյանը տեղեկացրեց ԵՊՀ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովում տեղի ունեցած փոփոխության մասին, ըստ որի՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողուհի Իրինա Վարդանյանն ավարտել է ուսումը, և նրա փոխարեն ՈՒԽ-ն առաջարկել է նույն ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանողուհի Վերգինե Դանիելյանի թեկնածությունը: ԳԽ-ն հաստատեց առաջարկվող փոփոխությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի կազմից ուսումնառությունն ավարտելու պատճառով հանել ուսանող անդամ Իրինա Վարդանյանին և նույն հանձնաժողովում նշանակել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Վերգինե Դանիելյանին:

9. Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ» բակալավրի նոր կրթական ծրագրի հաստատում:

ԵՊՀ ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի նախագահ Է. Ս. Գևորգյանը ներկայացրեց Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ» բակալավրի նոր կրթական ծրագիրը: Է. Գևորգյանի հավաստմամբ ծրագիրն անցել է սահմանված ընթացակարգի բոլոր փուլերով և համապատասխանում է պահանջվող չափորոշիչներին: ԳԽ-ն հավանության արժանացրեց ներկայացված կրթական ծրագիրը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ» բակալավրի նոր կրթական ծրագիրը:

10. **Տեղեկատվություն 2021-2022 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին:**

ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տ. Գալստյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման գործընթացն ու արդյունքները: Նա ներկայացրեց 2022-2023 ուստարվա ուսանողական նպաստների հատկացման արդյունքները, փոխատեղման հետևանքով առաջացած թափուր տեղերը՝ ըստ ֆակուլտետների, փոխատեղման ընթացքում առաջացած հավասար ՄՈԳ ունեցող ուսանողների թիվը՝ ըստ ֆակուլտետների, փոխատեղման արդյունքում շեմային ՄՈԳ-ը՝ ըստ բակալավրիատի մասնագիտությունների, ինչպես նաև այլ տեղեկություններ:

11. **Հաղորդում 2022-2023 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին:**

Հաջորդ հարցի շրջանակում ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հրանտ Ժամհարյանը հաղորդեց 2022-2023 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքները՝ նշելով, որ ընդունված ուսանողների քանակով ԵՊՀ-ն պահպանել է առաջատարի իր դիրքը: Նա տեղեկացրեց, որ 2022-2023 ուստարում առկա ուսուցման համակարգով ԵՊՀ բակալավրիատ է ընդունվել 2354 ուսանող, հեռակա ուսուցման համակարգով՝ 260 ուսանող: Առկա ուսուցման համակարգով ԵՊՀ մագիստրատուրա է ընդունվել 658, իսկ հեռակա ուսուցման համակարգով՝ 115 ուսանող:

12. **Հաղորդում 2022-2023 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին:**

Այնուհետև Հ. Ժամհարյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա ամբիոնային բեռնվածությունները՝ փաստելով, որ այս տարի ուսումնական բեռնվածությունը, ըստ ժամերի, կազմել է 642.082 ժամ:

13. **Հաղորդում ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2021-2022 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին:**

Հաջորդիվ պարոն Ժամհարյանը ներկայացրեց նաև տեղեկատվություն՝ ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2021-2022 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին:

14. **Հաղորդում ԵՊՀ ՈՒԳԸ 2021-2022 ուստարվա գործունեության մասին:**

Օրակարգային վերջին հարցի շրջանակում էլ ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ Մերի Փանոսյանը զեկուցեց ԵՊՀ ՈՒԳԸ 2021-2022 ուստարվա գործունեության մասին՝ նշելով, որ հաշվետու ժամանակահատվածում ՈՒԳԸ-ն կազմակերպել է 576 միջոցառում, այդ թվում՝ 5 գիտաժողով, որոնցից մեկը՝ միջազգային՝ նվիրված ՀՀ անկախության 30-

ամյակին: Բացի դրանից, ըստ Մ. Փանոսյանի, նշված ժամկետում տպագրվել է 54 հոդված:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

15.**Երևանի պետական համալսարանի 2022/2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի (այլ ֆինանսավորմամբ) անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի ընդունած որոշման հաստատում:**

Օրակարգային հիմնական հարցերի սպառումից հետո ԵՊՀ գիտական քարտուղար Մերի Հովհաննիսյանը անդրադարձավ անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի ընդունած որոշմանը: ԳԽ-ն հաստատեց ԵՊՀ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի (այլ ֆինանսավորմամբ) անվանական կրթաթոշակի հավակնորդների վերաբերյալ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի ընդունած որոշումը՝ անվանական կրթաթոշակ հատկացնելով Սոնա Եգորյանին, Վահե Հարությունյանին, Լիլյա Կարապետյանին ու «Մաթևոսյան զարգացման հիմնադրամի» կողմից ուսման վճարի մասնակի փոխհատուցում (50 տոկոսի չափով) տրամադրելով մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհիներ Նվարդ Արզումանյանին, Աննա Հովհաննիսյանին, Կարինե Թամրազյանին: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի՝ այլ ֆինանսավորմամբ անվանական կրթաթոշակ ու ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների անվանացանկը՝ համաձայն Հավելվածի:

16.**ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆ. Սեդա Գասպարյանի, դոցենտ Ալինա Պետրոսյանի «DOMAIN-SPECIFIC ENGLISH Insight into Health-Care Setting» աշխատությունը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես ուսումնամեթոդական ձեռնարկ հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը:**

ԳԽ-ն հրատարակության երաշխավորեց ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սեդա Գասպարյանի, դոցենտ Ալինա Պետրոսյանի «Domain-Specific English Insight into Health-Care Setting» աշխատությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

«DOMAIN-SPECIFIC ENGLISH INSIGHT INTO HEALTH-CARE SETTING» վերնագրով աշխատությունը (հեղ. Ս. Գասպարյան, Ա. Պետրոսյան) որպես ուսումնամեթոդական ձեռնարկ երաշխավորել հրատարակության ու միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն աշխատանքը որպես ուսումնամեթոդական ձեռնարկ հաստատելու հարցում:

17.ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի դասախոսներ Գայանե Մել-տոնյանի, Քրիստինե Սողոմոնյանի, Նաիրա Դիվանյանի «Գերմաներեն A2-B1 մակարդակների համար» աշխատությունը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը:

ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի դասախոսներ Գայանե Մելտոնյանի, Քրիստինե Սողոմոնյանի, Նաիրա Դիվանյանի «Գերմաներեն A2-B1 մակարդակների համար» աշխատությունը ևս երաշխավորվեց հրատարակության: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

«Գերմաներեն» (A2-B2 մակարդակների համար) վերնագրով աշխատությունը (հեղ. Գ. Մելտոնյան, Ք. Սողոմոնյան, Ն. Դիվանյան) որպես բուհական դասագիրք երաշխավորել հրատարակության ու միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը սույն աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

18.«Կլինիկական կրթությունը՝ որպես ակադեմիական կրթության և պրակտիկայի զուգակցման արդյունավետ եղանակ»:

Նիստի ավարտին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրեն Քնարիկ Վարդանյանը հանդես եկավ «Կլինիկական կրթությունը՝ որպես ակադեմիական կրթության և պրակտիկայի զուգակցման արդյունավետ եղանակ» թեմայով զեկուցմամբ՝ ներկայացնելով ԵՊՀ իրավաբանական կլինիկայի գործունությունը:

19.«Օրգանական թափոնների նախամշակում, մանրէային կենսազանգվածի, կենսաէներգիայի և արժեքավոր այլ նյութերի ստացում»:

Այնուհետև ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ Աննա Փոլադյանը խոսեց օրգանական թափոնների նախամշակման, մանրէային կենսազանգվածի, կենսաէներգիայի և արժեքավոր այլ նյութերի ստացման, ինչպես նաև կրթական ծրագրում հետազոտական բաղադրիչի ներմուծման արդյունավետ փորձի մասին:

Ձևավորված հաշվիչ հանձնաժողովի նախագահ Արթուր Սահակյանը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության արդյունքները, որոնց համաձայն՝ ԳԽ-ն հաստատել է ներկայացված բոլոր որոշումները:

Գիտական խորհրդի նախագահ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան